ՓԵՏՐՈՒԱՐ 24/8 ՄԱՐՏ 1904

Ա. ՏԱՐԻ. — ԹԻՒ 37

ԵՐԱԶՆՈՒԹԻՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին՝ 10 Ֆր. տարեկան

Հասցէ՝
Réd. du jour. „VERADZNOUTIOUN“.-Roustchouk
Ред. на в. „ВЕРАДЗНУТЮНЪ“. — Рyce

„ՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ“ ՄԱՍԻՆ

I.

Առաջին անգամ շատերին տարօրինակ թւաց Հնչակեան կուսակցութեան արած կոչը «նոր գործունէութեան» մասին։ Ո՛չ միայն զանազան շրջանակներ և անհատներ, այլ և նոյն իսկ յեղափոխական մարմիններն անգամ յանկարծակիի եկան և եղած առաջարկութիւնը թւեց բոլորին տարօրինակ, անհեթեթ և մինչև անգամ ցնորք ու անկարելիութիւն։ Այդպէս էլ սպասելի էր, քանի որ այդ դաղափարը նոր էր շատերի համար և տակաւին ոչ բացատրուած, մութ ու անորոշ։ Սակայն երբ խնդիրը մի քանի կողմից լուսաբանուեցաւ Հնչակեան թերթերի մէջ և հասարակական որոշ շրջանակներում տեղի ունեցաւ մտքերի փոխանակութիւն, երէկուայ մութ ու անհեթեթ երևցած գաղափարը կամաց կամաց պարզուեց, եղաւ հասկանալի և իբրև իրերի բնական ընթացքով առաջ եկած մի անհրաժեշտութիւն՝ պատկերացաւ շատերի առաջ իբրև ժամանակակից պահանջ։ Միւս կողմից ռուս կառավարութեան վերջին խստութիւնները, հայ եկեղեցական կալուածների ապօրինի յափշտակութիւնը և դրա հետ զուգորդուած մի շարք բռնութիւնները եկան հասկանալուց բացի՝ նաև զգացնել էլ տալու «նոր գործունէութեան» անհրաժեշտութիւնը։ Այս երկու ազդակները, այսինքն Հնչակեան պրոպագանդան և ռուս կառավարութեան վերջին խստութիւնները, ինչպէս նաև արտասահմանեան հայ մամուլի մէջ լոյս տեսած հակասական յօդուածները եկան շատերին կանխել տալու կանոնաւոր, կազմակերպուած և որոշ ծրագրով ու ուղղութեամբ սկսելիք «նոր գործունէութեան»։ Կովկասից ստացուած վերջին տեղեկութիւնները հաղորդում են, որ յեղափոխական տրամադրութիւնը օրից օր աւելանում է ժողովրդի զանազան խաւերում. շատերը ինքնաբերաբար ո՛չ միայն գալիս և մտնում են արդէն կազմակերպութիւն ունեցող Հնչակեան յեղափոխական շարքերի մէջ, այլ և ինքնուրոյն կերպով կազմակերպւում են զանազան խմբեր, անկախ այս կամ այն կուսակցութիւնից, և թռուցիկներով ու պրոպագանդայով կոչ են անում ժողովրդին կռուել ռուս կառավարութեան դէմ իրանց առաջարկած ծրագրով և եղանակով։

Այս բոլորը սպասելի էր անշուշտ։ Այս բոլորը ուրախալի են նաև։ Սակայն այս բոլորը ուսուցանող էլ են։

Ահա ուսանելի կէտերից մէկը։

Հնչակեան կուսակցութեան՝ «նոր գործունէութեան» մասին արած պրոպագանդայի դիւրութեամբ տարածուելը ու համակրութիւն գտնելը և Կովկասում արդէն սկսուած շարժումը Ռուս բռնապետութեան դէմ, իբրև իրական փաստեր, գալիս են համոզելու և հաստատելու մեր՝ Հնչակեաններիս քանիցս կրկնած այն հանգամանքը, որ ներկայումս Ռուսաստանում տիրող կարգերն ընդհանրապէս անտանելի են և անհամապատասխան այստեղ ապրող բոլոր ազգերի յառաջադիմութեան պահանջներին, որ ճակատագրական կերպով մօտեցել է այդ այլ ևս անպէտք ու վնասակար կարգերի բարձման ժամանակը, որ ազգերի ու ժողովուրդների այդ հոծ բազմութիւնը այլ ևս չի արելի պահել ներկայ միապետական ճնշիչ կարգերի մէջ և որ ընդհանուր ազգերի շարժման ժամանակ Ռուսաստանում, անկարելի է Կովկասի հայերին պահել անշարժութեան և հնազանդութեան մէջ։ Ժամանակից առաջ, առանց հանգամանքների խիստ պահանջոտութեան, ո՛չ մի տեղ և ո՛չ մի դէպքում անկարելի է յեղափոխութիւն առաջ բերել լոկ պրոպագանդայով։ Յեղափոխական պրոպագանդան իւր նիւթը վերցնում է ժամանակակից պահանջներից և հող է գտնում միայն այնտեղ, ուր այդ պահանջները սուր են և ստիպողական։ Եթէ այսօր Հնչակեան պրոպագանդան լայն թևերով սաւառնում է ռուսահայոց բոլոր խաւերում, պատճառն այն է, որ ինքը երկիրն է նիւթ տալիս այդ պրոպագանդային և այդ երկրի քաղաքական և տնտեսական հանգամանքներն են հասկանալի դարձնում պրոպագանդան և նրա նպատակը։

Ահա և մի երկրորդ ուսանելի կէտ։ Ամեն մի յեղափոխութիւն յաջողութեամբ պսակելու և իւր նպատակին հասցնելու համար՝ հարկաւոր են մի կարգ արտաքին նպաստաւոր հանգամանքներ, ինչպէս նաև յեղափոխական գործիչին ասպարէզ նետուելու և անձնազոհութեամբ գործելու համար հարկաւոր են՝ նպատակին հասնելու վերաբերմամբ՝ յուսադրող, հաւատ ներշնչող հանգամանքներ։ Տաճկահայոց յեղափոխութեան սկզբնական շրջանում երևում էին արտաքին նպաստաւոր հանգամանքներ և հաւատք՝ դէպի գործի յաջողութեամբ պըսակուելը։ Այդ էր պատճառը, որ բազմաթիւ յեղափոխականներ ասպարէզ նետուեցան անձնազոհութեամբ և գործը թաւալագլոր առաջ գնաց։ Սակայն երբ այդ յեղափոխութիւնը վիժեց, երբ Եւրոպական պետութիւնները դաւաճանեցին հայկական գատին և երբ ռուս միապետութիւնը թև ու թիկունք հանդիսացաւ կարմիր գազանին, յուսացուած արտաքին նպաստող հանգամանքները չքացան և յեղափոխականի դէպի իւր գործը ունեցած հաւատքը կորաւ։ Այդ է պատճառը, որ վերջին 6—7 տարիների ընթացքում տաճկահայ յեղափոխութիւնը անունով է միայն որ գոյութիւն ունի և յեղափոխականները անունով է միայն որ կան։ Ներկայումս ռուսահայոց մէջ երևցած շարժումը և այդ շարժումը արտայայտող զանազան ձևի կռիւներն ու կազմակերպութիւնները, նոյնպէս և Հնչակեան շարքերի օրըստօրէ ստւարանալը ապացուցանում են որ «նոր գործունէութիւնը» ունի յուսադրող և հաւատ ներշնչող հանգամանքներ։ Ռուս միապետութիւնը եղաւ գլխաւորապէս տաճկահայ յեղափոխութեան ապարդիւն անցնելուն պատճառը։ այդ նոյն միապետութեան տապալումը կը լինի տաճկահայ գատին նպաստող մի արտաքին հանգամանք։ Բացի այդ Ռուսաստանի բոլոր ազգերի բողոքը տիրող միապետական կարգերի դէմ, այդ ազգերի հակակառավարչական կազմակերպութիւններն ու ցոյցերը և որ ամենագլխաւորն է ռուս սոցիալիստական և բանւորական կազմակերպութիւնների հսկայական առաջադիմութիւնը հաւատք են ներշնչում ամենի մէջ, որ մօտ է ընդհանուրի ազատութեան օրը և յուսադրում են գործիչներին ասպարէզ նետուել և անձնազոհութեամբ գործել՝ փութացնելու համար ազատութեան այդ սուրբ օրը։

Վերոյիշեալ ուսանելի կէտերը առաջ են բերում և մի երրորդ ուսանելի կէտ, ինչ որ մատնանիշ էի արել իմ նախորդ յօդուածում։ Այդ այն է, որ այլ ևս անկարելի է կասեցնել սկըսուած շարժումը, որ նա օրըստօրէ պիտի ստանայ աւելի արագաքայլ ընթացք և այն միջոցը, որը գործ են դնում մեր հակառակորդները սխալ ցոյց տալու համար «նոր գործունէութեան» գաղափարը, բռնազբօսիկ է և ապարդիւն։ Ո՛չ մեր հակառակորդների և պահպանողականների քարոզները և ո՛չ էլ ռուս բռնապետական կառավարութեան խստութիւնները պիտի կարողանան կանգնեցնել և սպանել սկսուած շարժումը։ Նա առաջ կը գնայ, կընդարձակուի, կըստանայ ընդհանուր ծաւալ և կը մտնի իւր քաղաքական նշանակութեան և դերի մէջ։ Մնում է որ այդ շարժումը առաջ տարուի որոշ ծրագրով և ուղղութեամբ, որ նա համառուսական շարժման մի մասը կազմէ՝ համաձայն Ռուսաստանի Սոցիալ-Դէմոկրատ կուսակցութեան վերջին կոնգրէսի մէջ ընդունուած ծրագրի պահանջներին։ Հնչակեան կուսակցութեան թէ՛ մօտակայ և թէ՛ հեռաւոր նպատակին հասնելու տեսակէտից ռուսահայ յեղափոխութիւնը կազմում է այն հիմքը, որի վրայ պիտի կառուցուի ամբողջ շէնքը։

Ուստի անհրաժեշտ է որ այդ հիմքը ձգւի խորը, ամուր, հաստատուն և նպատակայարմար կերպով։

Իրեն, ամբողջ Ռուսաստանի համար, առաջ է գալիս և պատրաստւում է մի նոր դարագլուխ։ Նախ քան այդ դարագլխի բացումը, նա պիտի անցնի մի կարգ փոթորիկների միջից, փոթորիկներ, որոնք իրանց միջից ծընունդ պիտի տան ապագայ քաղաքական և տնտեսական կազմակերպութեանց։ Ուրեմն ինչպէս որ լինեն այդ փոթորիկների հանգամանքները, իրանց առաջ բերած արդիւնքն էլ համապատասխան կը լինի այդ հանգամանքներին։

Արդիւնք կուլտուրական զարգացման և տնտեսական պայմանների, Ռուսաստանի յեղափոխութիւնը սկսւում է և, ինչպէս արդէն երևում է, առաջ պիտի տարւի սօցիալիստական սկըզբունքների հիման վրայ սօցիալիստական ծրագրով։ Անշուշտ նոյն սօցիալիստական սկզբունքներով և ծրագրով առաջ պիտի ընթանայ հայկական յեղափոխական շարժումը Կովկասում։ Արդ՝ Հնչակեան կուսակցութեան ծրագիրը հիմնւած լինելով գիտական սօցիալիզմի և քաղաքական խընդիրների լուրջ ուսումնասիրութեան վրայ, երևան է գալիս իբրև ամենաճիշտ, ամենագործնական և ամենանպատակայարմար ծրագիրը ռուսահայ յեղափոխութեան համար։ Նա իւր մէջ ամփոփում է թէ՛ նպատակը և թէ՛ գործունէութեան ուղղութեան և եղանակի բոլոր տարերքը։

Մինչդեռ ներկայ իրականութիւնը ցցայնել է տալիս ռուսահայ յեղափոխութեան անհրաժեշտութիւնը, և մինչդեռ այդ անհրաժեշտութիւնը զգացողներից շատերը տակաւին տարտամ ու վայրի վերոյ հաւկացողութիւն ունենալով այդ յեղափոխութեան նպատակի, ուղղութեան և տակտիկայի վերաբերմամբ չը գիտեն իրանց բռնելիք ընթացքը, Հընչակեան կուսակցութիւնը երևան է գալիս իւր պարզ ու որոշ ծըրագրով, ինչպէս նաև իւր խոշոր կազմակերպւած ուժով։ Սա մի շատ նպաստաւոր և բարեպատեհ հանգամանք է Կովկասեան հայ յեղափոխական շարժման համար, որից պէտք է օգտւի ժողովուրդի բանիմաց դասակարգը և մասնաւորապէս հայ սօցիալ-դէմօկրատիան։ Պէտք է մեծ ուժերով փարել այլ կուսակցութեան, ընդգրկել այդ կուսակցութեան ծրագիրը, աւելի ևս ստւարացնել և ուժեղացնել նրա կազմակերպւած շրջանակները և պատրաստել այն խոշոր մարտական ուժը, որը հարկաւոր է մեզ երևան բերել ընդհանուր ապըստամբութեան ժամանակ ամբողջ Ռուսաստանում։ Հէնց այդ ուժի փանակից և նրա կատարած դեբի որպիսութիւնից էլ կախւած կը լինի կովկասահայոց առաջադրելիք պա[…]ջների և ստացած արդիւնք[…]րպիսութիւնը։

Յաջորդիւ կանդրադառնանք այս խնդրին՝ կանգ առնելով ջնոր գործունէութեանս միջոցների և եղանակի մասին։

Թաւրիզ. Սլաք.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

IV.

Միթէ՞ իրականացաւ։ Այս հարցը կը տայ իրեն իր դերն ըմբռնած բանւորը, որը դժբաղդութիւն կունենայ խօսել այն բաղդակիցների հետ, որոնք այսօր իրենց ձգտումների և իդէալի վերջնական յաղթանակի մասին թեթև, սխալ և վերին աստիճանի այլանդակ գաղափար ունեն կազմած։

Որպէս ապացոյց մեր այդ ասածների, կարող են ծառայել խակ բանւորի խօսքերը՝ իրականութիւնից վերցրած ու գրի անցկացրած։

Ի՞նչ է ասում նա։

Նա ասում է՝ «Սրանից 1—2 տարի առաջ ես իբրև իմ աշխատանքի վարձը ստանում էի օրական 1 րուբլի, իսկ այժմ «փառք Աստուծոյ» ստանում եմ 2 րուբլի։ Այն ժամանակ ես ապրում էի աւելի կեղտոտ և աւելի անյարմար սենեակներում, քան այժմ, իսկ ներկայումս իմ ռաճիկը երբեմն 10—15 կոպէկով օրական աւելացնում են։ Մի ժամանակ, երբ նաւթահանքում բաղնիս չըկար, երկար ժամանակ կեղտոտ էի մնում, այժմ բաղնիս էլ կայ։ «Փառք Աստուծոյ» ապրում եմ էլի ինձ համար, ոչ մի բանի նեղութիւն չեմ քաշում։ Էլ ի՞նչ միտք ունէ լսել վանդալ ագիտատորների քարոզները, էլ ի՞նչ կարիք կայ գործադուլ, դեմօնստրացիա սարքել կամ նրանց մասնակցել։ Ոչ, դա իմ կողմից խօզէինի վերաբերմամբ ապերախտութիւն կը լինի, անխղճութիւն կը լինի, ինչ որ ուզում ենք՝ մարդիկը տալիս են, հօ իրենց ամբողջ հարստութիւնն էլ մեզ չեն տալու, որ իբար մէջ հաւասարապէս բաժանենք»։

Եւ դրանով «փառք Աստուծոյ» սօցիալիզմն իրականացաւ... Միթէ՞...

Այսպէս սխալ մտածող և իրենց դասակարգային գիտակցութիւնից կատարելապէս զուրկ, մեր նախկին ընկերների (ընկերներ ասելով մենք չենք հասկանում միայն Հնչակեաններ ու հայեր և ոչ էլ միայն մեր կազմակերպութեան մարդիկ, այլ և ուրիշ սօցիալիստական կուսակցութեան պատկանողներին) թիւը մեծ չէ, նրանք 3—4 նաւթահանքերում ու գործարաններում են միայն։

Այդ երևոյթը բանւորների մէջ մի կողմից փաստ է նրանց քաղաքական տհասութեան, միւս կողմից՝ նրանց սխալ ուղիի վըրայ դրւած լինելուն։

Բանւորներին՝ իրենց պատմականապէս անհրաժեշտ կաւի դժւարին, բայց և նուիրական ասպարէզից յետ կանգնեցնողը՝ միմիայն տնտեսական հողի վրայ կռւելու համար՝ նրանց պատրաստւած լինելն է և դեռ այդ էլ թերի։ Եւ դրանց վերջը այդպէս էլ պէտք է լինէր, եթէ աչքի առաջ ունենանք բանւորի այժմեան մտաւորական հորիզոնը և դրանից, գլխաւորապէս, բըղխող ըմբռնումը սօցիալիզմի էութեան մասին։

Կապիտալիստների սեղանի մնացորդ – փշրանքներից մի քանի կտոր ստանալով ոչ-զարգացած (որպէս դասակարգ) այդ բանւորները կարծում են թէ իրենց հարկաւոր եղածը այդ էր, և դրա համար էր, որ գիշեր ցերեկ իրենց քարոզում էին պրոպագանդիստներն ու ագիտատորները։

Կապիտալիստները հեշտութեամբ գտել են բանւորների՝ այսպէս ասած՝ «տամարը» նրանց հեռացնելով գործադուլներից։ Այդ միջոցը, ինչպէս ասացինք, կայանում է մի քանի փշրանքներ բանւորների առաջ շպրտելու և նրանց աչքերը այդպիսով թող փչելու մէջ։ Ասենք որ այդ փըշրանքներն էլ միայն մեծ ֆիրմաներում են, որոնք մատերով կարելի է համրել։

Կապիտալիստի այդ «բարութեանը» նպաստում է միապետական կառավարութիւնը, համարելով այդ բանը «երկու չարեաց փոքրագոյնը»։ Այդ երկուսին էլ հաճելի է ու ձեռընտու բանւորների միայն տնտեսական պահանջներին բաւարարութիւն տալ, որը թէ որոշ չափով տանելի է, (որովհետև այլ կերպ չի լինի), և թէ քիչ վնասներ կը պատճառէ, — քան տեսնել սօցիալիստ-յեղափոխականի վառօդն ու դտակը, նրա վճռական հարւածները՝ ուղղւած դէպի խարխուլ միապետութեան հիմքերը։ Եւ այդ վերջինն է որ աբսօլիւտիզմի մահաբեր թշնամին է ու սօցիալիստական գործը խոշոր քայլերով առաջ մղողը...։

Այլևս ի՞նչ խօսք կարող է լինել վերոյիշեալ տհաս բանւորների յեղափոխական-սօցիալիզմի կռւի մէջ մասնակցելու մասին, քանի որ նրանք տնտեսականի, փշրանքների էլ կարիք չունեն, որովհետև «փառք Աստուծոյ ապրում են էլի»։ Այստեղ էլ հարց է առաջանում՝ միթէ՞ ապրում են։

Այդ փոքրիկ, այսպէս ասած, բէակցիային նպաստում են և ռուսական Արփիարի՝ Զուբատովի հետևողները, որոնք բանւորների մտքերը պղտորում են ու աշխատում խաբուսիկ յոյսերով դրանց մէջ մեռցնել բողոքելու ամեն մէկ ձգտում։

Սակայն այդ պատճառները չեն կարող արգելք հանդիսանալ գործի աջողութեան, չեն կարող դրա վրայ մազի չափ անդամ ազդել, — եթէ բանւորները որպէս ուրոյն դասակարգ կրթւած լինեն, գիտակից իրենց շահերին, ձգտումներին և վստահ իրենց կռւի վերջնական անմահ յաղթանակին։ Եւ այդ դէպքում է որ նրանց բանակը կը լինի անյողդողդ, թշնամու դէմ կուրծք տւող, ողորմութիւններով չը բաւականացող, համոզւած կռւող և դրա համար էլ որպէս ոյժ՝ պատկառելի, հուժկու։

Անկասկած այդ երևոյթը պահանջում է, ուրեմն, կուսակցութիւնից, գործիչներից՝ կրակոտ աշխատանք, կրկնակի եռանդ ու ջանք զարգացնելու այդ բանւորների մէջ դասակարգային և այս անգամ այլևս, ֆիզիկոյից յետոյ, յեղափոխական սօցիալիզմի ոգին, նրանց ձեռքը փոխանակ փայտեր տալու՝ պարտաւորեցնել զէնք կրել, փոխանակ միայն տնտեսական քարոզը նրանց ուղեղն լեցնել, փոխանակ դատարկ «ГОЛОЙ»ներ (կորչիներ) բղաւելու՝ սովորեցնել արիւն վոթել, որովհետև պէտք է վերջապէս համոզւել, որ մեծ գաղափարները արիւնով միայն կերագործուին, վառօդով գնտակով ու սուրնով է որ վերջ կը տրւէ դասակարգերի գոյութեան և ամեն տեսակ չահագործութեան։

Աշխատե՛նք դրա համար։

Բաքու 29 Յունվ. 1904 Ահրիման

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՄ ՆԱՄԱԿՆԵՐԸ Ա-ին

ՆԱՄԱԿ IV.

Սիրելի ընկեր!

Նախկին նամակներումս քեզ որոշ չափով ծանօթացրի ռուս պահպանողական մամուլի տենդենցիայի և նրա՝ այսպէս ասած՝ «պսակ գործոց» համարւած «գրական ոճրագործ» Կոմարովի, Սուվորինի, Վելիչկոյի, Շարաբովի, Բուրենինի և սոցա ընկերների ու արբանեակների քաջագործութիւնների հետ, որոնք մանաւանդ կովկասահայ վերջին անկարգութիւնների ժամանակ՝ իրենց գազաթնակէտին հասած առասպելախառն թխած յօդւածներով՝ հայերիս ռուսաց մեծ հոգի պետութեան վերաբերմամբ «ապերախտ» և «թշնամի» յորջորջեցին։ «Ապերախտ են հայերը — ասում են նոքա — նրանով, որ ազատարար ռուս պետութիւնը իրենց թրքական և պարսկական բարբարոսութիւններից ազատելով, մարդկային և քաղաքացիական լայն օրէնքներ,

մեծաւոր եւ տնտեսական ընդարձակ ասպարէզ շնորհելով (ասպարէզ, որ նոյն իսկ մորակներով անգամ հայերը Ռուսաստանից ձեռք չեն քաշում), այժմս նոքա ամենայն ապերախտութեամբ ռուսաց ամենակարող Միապետի տնօրինութիւններին հակառակ ուզում են գնալ և Ցաճկաստանում ու Ռուսաստանում նպատակ ունեն հայկական հարց ստեղծել՝ ինչ որ «Մեծ Հայաստանիս ազատութեան և նորա ապագայ փառքերի վերայ երազելով։ Ապերախտ հայեր. մի բոպէ մոռանում են, որ հէնց վերջին տարիներս տաճկական սրերից ազատող (այսինքն այն սրերից, որն հէնց ռուս պետութիւնն էր կռել կոփել Մեծ Մարգասպանի բաշիբոզուկների համար) տասնեակ հազարներով տկլոր ու բոբիկ հայ գաղթականները հիւրասէր Ռուսաստաստում ապաստան գտան։

Բայց մի՞թէ այդպէս է... Մի՞թէ ռուսական պետութիւնը հայերիս համար կամ զուտ մարդասիրական տեսակէտով թուրքերի և պարսիկների ձեռքից խլեց հայկական նահանգները։ Մի՞թէ բաղմաչարչար հայ գաղթականը ռուսաստանում այնպէս լայն ազատութիւն գտաւ, ինչպէս այդ պոռնիկ թերթերը վարդագոյն գոյներով նկարագրում են։ Ո՞ւմ յայտնի չէ ծեծուած ու վիրաւոր հայ խղճուկ գաղթականին ռուսական հրէշ դիւանագիտական յետին մտքերին խաղալիկ դառնալը, տարիների ընթացքում նորան այս կողմ այն կողմ քաշքշելը, մշտապէս կօշակների պըլէանների և Ցաճկաստան քշելու սպառնալիքների տակ ոստիկանատներ լեցնելը, անուններ ցուցակագրելը կայլն կայլն։ Եւ այս բոլորը նորա համար, որպէսզի հարկադրէ անճարացած հայ գաղթականին ռուսական հպատակ գրուելու սև շապիկը հագնել։ Իսկ երբ անճարացած հայ գաղթականը իւր անոյշ վաթանից ու հանդ անգաստանից յոյսը բոլորովին չկտրելու համար չուզեցաւ ռուսահպատակութիւն ընդունել, — ռուս անխիղճ պետութիւնը հակառակ արիւնաշաղախ ու տկլոր բոբիկ հայ գեղջուկի ողբ ու կոծի, հակառակ նորա փոքրիկ երեխաների յորդահոս արտասուքներին, ամենալիրբ կերպով բոլորին հաւաքելով, բռունցքների և մտրակների հարուածների տակ, իրենց հայրենիքը ճանապարհ դնելու համար՝ իւր երկրի սահմաններից հեռացրեց։ Ո՞ւմ յայտնի չէ թշուառ գաղթականի 1902 թ. աշնան վերջին ցրտերին ռուս–թրքական սահմանագլխի բարձրաւանդակներում ձիւն ու բքի տակ սպասելը։ Վերջապէս ո՞ւմ յայտնի չէ, որ ամիսներով հայ գաղթականը սահմանագլխում դեղերելով՝ ո՛չ կարմիր Սուլթանն էր բարեհաճում իւր հողում ընդունելու և ո՛չ իւր եղբայր սպիտակ Նիկոլան։ Այսպիսով արիւնաքամ հայ գաղթականը բառի ամենալայն նշանակութեամբ երկու սրի մէջ էր մնացել՝ լեռան մէկ կողմը տաճկական բթացած սուրն էր փայլում, իսկ միւս կողմը ռուսական հրէշ կօշակի մտրակը, բռունցքն ու հայհոյանքը (որ տաճկաց բթացած սրերից աւելի զազրելի է)։ Ա՜հ, սիրելի ընկեր! ռուս պետութեան դէպի հայերը ունեցած անարդ քաղաքականութեան ամենախաւար բըծերից մէկն է այս արիւնուտ տասարանը։ Սա մի բիծ է, որ յաւիտեանս անջնջելի կը մնայ անկաշառ պատմութեան ողբերգական էջերում։ Հայը չի կարող մոռանալ այս բոլորը։ Ինչպէս գիտես, անճարացած հայ գաղթականը այլևս անկարող լինելով հայկական բարձրաւանդակի սոսկալի ցրտերին դիմանալ, կամայ թէ ակամայ՝ զիջեց ռուսաց բռնակալ քարասիրտ պետութեան և նորան հպատակ գրուեցաւ, ու այնպէս թոյլ տրուեց լեռներից վայր իջնել։

Այո՛, փոխանակ հայերին ապերախտ անուանելու, այդ բառը ամենայն իրաւամբ միմիայն ռուս լիրբ պետութեան, նորա նենգ դիւանագէտներին, վարձկան խմբագիրներին և կաշառակեր պաշտօնեաներին պէտք է յատկացնել։ Ապերախտ այդ գազաններն են, որոնք փառքի և պատուի անսանձ տենչերից կուրացած, տանջուած ժողովրդի արդար կոպէկներից յղփացած, «լուն գոմէշ շինելով», յեղաշրջեցին իրականութիւնը։ Իսկ հայերիս՝ «ապերախտ» անուան փոխարէն՝ աւելի ճիշտը «յուսախաբ» անունը պէտք է տալ, որ խաբուելով ռուսական խաչէն, խաբուելով ռուսաց՝ քրիստոնէական վսեմ եղբայրասիրական հաւատակցէն, այպիսով «Հիւսիսի արջիս» թակարդն ընկաւ։ Այո՛, խաբուելով խաչապաշտ ռուսէն, խաչապաշտ հայն էլ ոչ մի միջոց չխնայեց նորան իւր երկրներին տիրանալու անվերջ հրաւէրներ կարդալուց։

Մոսկուա Սրաք

(Շարունակելի)

ԱՍՏՐԱԽԱՆ, 3 փետր. 1904 թ.

Մի քանի օր է, որ Եպիսկոպոսնիան յայտարարել է պատերազմ. և հէնց գործի սկզբից մեր ինքնագով կառավարութիւնը ցոյց տուեց իր կատարեալ դատարկութիւնը և սնանկութիւնը։ Կամենալով մի կերպ քողարկել իր խաչտառակ պարտութիւնները և իր դիրքը պահել կեղծ բարձրութեան վրայ՝ նա ամեն կերպ յուսադրում է միամիտներին, որ ինքը կը ջարդէ և չարաչար կերպով կը պատժէ հեթանոս եպիսկոպոսնացիներին։ Միևնոյն ժամանակ արհեստական միջոցների է դիմում ժողովուրդի մէջ վառելու համար կեղծ շովինիստական ձգտումներ։ Այդ քաղաքականութեան ուրականը հասաւ և մեր քաղաքը։ Պոլիցիական շպիոնները (լրտես) փողոցներում պտտեցին և ցոյցեր արեցին՝ երգելով ազգային հիմնը։ Միամիտ ամբոխ մի անորոշ բան է, եւ, այսպէս ասած անորսալի...

— Սակայն, եթէ չեմ սխալւում, դուք ինքներդ այդ էիք կանչում...

— Փա-աստ, յանկարծ կանչեց ագռաւը.

Միտը շփոթուեց։

— Արդարև, ձերդ-թիւն. միանգամ կանչեցի... սակայն յանցանքը թեթեւացնող պարագաներում...

— Իսկ... այսինքն ի՞նչպէս։

— Կամաց բղաւեցի կեցցէ ազատութիւն եւ ի՞նկոյն աւելացրի՝ օրինականութեան սահմաններում։

Ծովաթութակը նայեց ագռաւին։

— Ճիշտ այդպէս է, ձերդ-թիւն, պատասխանեց ագռաւը։

— Ես, ձերդ-թիւն, լինելով պալատական ծիտ, ինձ չեմ կարող թոյլ տալ լուրջ վերաբերել, որովհետեւ սոյն հարցը չէ նշանակւած նրանց թըւում, որոնք մշակել է վարչութիւնը, որի մէջ ես պատիւ ունեմ ծառայելու։

— Փա-աստ, նորից կռաւեց ագռաւը։ Այդ միեւնոյն է թէ հասատել։

Իսկ փողոցից հոսում են առակները եւ երգում մղմիկ երգ այն գետի մասին, ուր նրանք ճանապարհի վերջում ազատումն են, եւ իրենց ապագայի մասին ասում՝

— Լայն, սրընթաց ալիքները մեզ կընդունեն, կը գրկեն եւ իրենց հետ կը տանին ծովը եւ նորից, գուցէ, մեզ երկինք բարձրացնեն արեւի տաք ճառագայթները, իսկ երկնքից մենք կրկին, որպէս զովացուցիչ ցող, գիշերները կը թափւենք՝ ձեան կամ առաստ անձրեւի հետ։

Հրաշալի արեւ՝ գարնան փաղաքշող արեգակը ժպտում է պայծառ երկնքում աստուծոյ ժպիտով՝ լի ըստեղծագործութեան տենչով վառուած սիրով։

Այգու անկիւնում հին մայրի ծառի ճիւղերի վրայ նստած է դեղձանիկների երամը եւ նրանցից մէկը ոգեւորուած երգում է ընկերների համար իւր մի տեղ լսած երգը՝ մրրկահաւի մասին։

Ծովի սպիտակ հարթութեան վերայ քամին ամպեր է կուտակում։ Ամպերի եւ ծովի միջեւ հպարտ որոտում է մրրկահաւը՝ նման սեւ շանթի։ Մերթ թեւերը քսելով ալիքներին, մերթ սլաքի նման նետւելով դէպի ամպերը՝ նա կանչում է, — եւ ամպերը թռչունի համարձակ ձայնի մէջ ուրախութիւն են լսում։

Այդ ձայնի մէջ փոթորիկի ծարաւ կայ։ Բարկութեան ոյժը, տենչանքի բոցը եւ հաւատը յաղթութեան՝ ամպերը լսում են այդ ձայնի մէջ։ Արագիլները հառաչում են մրրիկի պատճառով. հառաչում են, պտտւում ծովի վրայ եւ պատրաստ են իրենց սարստփը փոթորկից՝ թաքցնելու նրա յատակում։ Եւ ջրասուզակները (գագարի) նոյնպէս հառաչում են. նրանց անմատչելի է հոգսալից կեանքի քաղցրութիւնը. հարուածների գոռոցը նրանց վախեցնում է։ Ցիմար ծախսագը (պինգուին) երկիւղով ժայռերում ծածկում է իւր իւղոտ մարմինը... Միայն հպարտ մրրկահաւն է սր ազատ ու համարձակ շորոտում է փրփուրից սպիտակացած ծովի վրայ։

Ամպերը աւելի մռայլում են եւ ծովից ներքեւ իջնում ալիքները ե՛ւ երգում են ե՛ւ պարում դէպի վերորոտի դիմաց որոտ է գոռգոռում։ Հողմերի հետ կուելով ալիքները փրփրած բարկութեամբ մռնչում են։ Ահա քամին ամուր գրկելով շրջապատում է ալիքների մի ամբողջ կոյտ եւ նրանց թափով բարկացած շպրտում վայրենի ժայռերի վրայ, ջարդ ու փշուր անելով եւ փոշի դարձնելով այդ զմրուխտեայ հսկաները։

Մրրկահաւը բղաւելով որոտում է նման սեւ շանթի. սլաքի նման ծակում-անցնում է ամպերը, ալիքների փրփուրը թեւերովը պոկում։

Ահա՛ նա դեւի, — փոթորկի սեւ, հպարտ դեւի, — նման սլանում է, ե՛ւ ծիծաղում, ե՛ւ հառաչում... Նա ամպերի վրայ ծիծաղում է. նա ուրախութիւնից հառաչում է։

Որոտի յուզմունքի մէջ, — հոտառո՛ւ դեւ. — նա վաղուց ցոգնածութիւն է զգում. նա հաւատացած է, որ ամպերը արեգակին չեն ծածկիլ. ո՛չ, չեն ծածկիլ։

Քամին ոռնում է... Որոտը գոռգոռում... Կապոյտ բոցի նման ամպերի կոյտերը ծովի անյատակութեան վրայ բոցավառում են։ Ծովը որոնում է շանթերի սլաքները եւ հանգցնում իւր ճեղքւածների մէջ։

Այդ շանթերի անդրադարձումը ուղղակի կրա՛կ-օձերի նման լցւում են ծովը, անյետանում։

— Մրրի՛կ։ Շուտով մրրիկ կը լինի։ Այդ համարձակ մրրկահաւը հպարտ մնչում է կայծակների մէջ՝ յուզմունքով որոտացող ծովի վրայ. դա յաղթութեան մարգարէն է, որ կանչում է՝

— Թո՛ղ աւելի ուժգին գայ փոթորիկը։

Ահրիման

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄԵՂԵԴԻՆԵՐ

(Մաքսիմ Գորկիի)

(շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Երկնքից այգու ճեղքւածքի վրայ իջաւ արտոյտը եւ նրա վրայով վազելով՝ փնթփնթաց.

— Արշալոյսը իւր ժպիտով մեղմիկ հանգցնում է աստղերը երկնքում.. Գիշերը գունաթափւում է։ Գիշերը դողում է եւ, ինչպէս սառոյցը արեւի տակ, հալւում է գիշերային թանձր խաւարի ծանր ծածկոցը... Ինչպէս քաղցր ու թեթեւ է շնչում կուրծքս՝ լցւած լոյսին եւ ազատութեանը դիմաւորելու լիառատ յոյսով։

— Այդ ի՞նչ թռչուն է, խոժոռադէմ հարցրեց ծովաթութակը։

— Արտոյտ է, ձերդ-թիւն, խիստ կերպով ասաց ագռաւը ծխնելոյզի յետեւից։

— Բանաստեղծ է, ձերդ-թիւն, խոնարհաբար աւելացրեց ծիտը։

Ծովաթութակը աչքի տակով ածեց բանաստեղծի վրայ ու խոխոաց։

— Ըմմ... ինչպէս մոխրագոյն է ... անճոռնի՛։ Նա կարծես ինչ որ արեւի մասին... կարծեմ ազատութեան մասին երգեց։

— Ճիշտ այդպէս է, ձերդ-թիւն, — հաստատեց ագռաւը — նա պարապւում է անհիմն յոյսեր արթնացնելով փոքրիկ թռչնիկների սրտերում, ձերդ-թիւն։

— Դատապարտելի է... անմիտ։

— Կասարելապէս ճիշտ է, ձերդ-թիւն, ասաց ծերը ծիտը. այո՛, անմիտ է։ Ազատութիւնը, ձերդ-թիւն,

խը, ճիշտ է, միացաւ գրանց աննշան թւով, սակայն հէնց միւս օրը յայտնի եղաւ, թէ ո՛վքեր էին ցոյցերի կազմակերպողները։ Ներկայումս այլևս այդպիսի խաղ տեղի չի ունենում։

Բացի այդ, նկատւում է դրամի խիստ կարօտութիւն ։ Այն կառավարութիւնը, որ շարունակ երկու կէս էր լինում և ասում՝ թէ ճապօնացիք փող չունեն, այսօր ինքը դրամական այնպիսի տագնապի մէջ է, որ անամօթ կերպով կոպէկների ետևից է ընկած ։ Ժողովրդից փող է որ գրչլում են, և ծիծաղելին այն է, որ միւս օրը իրանք էլ լրագրերում յայտարարում են, թէ այս ինչ անձնաւորութիւնը, կամ այն ինչ ընկերութիւնը՝ գրգուած ազգասիրակա՞ն միտումներից՝ այսքան է նուիրել ։ Բայց ո՞վ կը հաւատայ։ Ահա մի քանի փաստեր։ Օրիորդաց գիմնազիայի աշակերտուհիները փող են հաւաքում 203 րուբլի, որ կազմեն իրանց սովորական տարեկան երեկոյթը։ Համոզում են, որ այդ գումարը յատկացնեն Կարմիր Խաչին ։ Միւս օրը գրեցին, թէ աշակերտուհիները իրանց յօժար կամքով հրաժարվեցին երեկոյթից և գումարը նուիրեցին յօգուտ վիրաւորված զօրքի։ Դարձեալ գալիս են թոյլտուութիւն խնդրել՝ երաժշտական երեկոյթ կազմելու. առաջարկում են արդիւնքի երրորդ մասը յատկացնել պատերազմական գործին։

Իսկ մաղթանքնե՞րը։ Շարունակւում են ու շարունակւում. և ի՞նչ են խնդրում այդ մաղթանքներում. — ոյժ և կարողութիւն Թագաւորի բազուկին, ռուսաց զէնքին։ Մաղթանքները եթէ ոյժ և կարողութիւն ունենային և եթէ մի բան տային խնդրողին, այսօրւայ օրը հայը իր հայրենիքում գերի չէր լինէր, որովհետև հայից աւելի աղօթող ազգ չգիտենք աշխարհիս երեսին ։ Այժմ ամեն մինը գիտէ մաղթանքի զօրութիւնը, գիտէ թէ նրանք ի՞նչ կողմից և ի՞նչ նպատակով են գալիս։ Կառավարութեան ծախուած հոգևորականները իհարկէ կաշուից դուրս են գալիս և քարոզներով միամիտ ամբոխին շփոթում են, բայց իրանց նպատակին չեն հասնում ։ Այսպէս, հրէա քահանան մաղթանքի աղօթքն անգամ ռուսերէն թարգմանեց, նաև աղօթեց նահանգապետի համար. բայց քաղաքում մարդ չեղաւ, որ դրան չմեղադրէր ։

Այսօր, Ղևոնդեանց տօնի օրը, մենք ականատես եղանք նոյնպէս մի քարոզի, որը երբեք չէինք կամենայ լսել ։ Թեմիս առաջնորդ Արիստակէս արք. Սեդրակեանը ցանկացաւ, որ թագաւոր կայսրը իր գահի վրա երկար ու պինդ նստէ, որ ռուսաց զէնքը ջարդէ ճապօնացիներին. «մենք մեր ընդհանուր հայրենիքին պէտք է օգնենք, — ասաց նա, — հայերը միշտ օգնել են, այս անգամ էլ վստահ եմ թէ չեն զլանայ» ։ Այդ ասելով առաջարկեց ստորագրել գումարներ՝ ով որքան կարող է ։ Ճիշտ է, հարկից ստիպուած մօտեցան և նուիրեցին 700-ից աւել մի գումար, բայց ի՞նչ զգացմունքով և ինչպիսի՜ ստիպողականութիւնով. եթէ մեր կառավարութիւնը պատուի մի աննշան զգացմունք ունենար... ձեռք կը քաշէր այդ մուրացկանութիւնից ։ Բայց, չէ՞ որ փող է պէտք... մենք սպասում ենք աւելի սոսր միջոցների։

Սակայն այդ գումարների գլխումը հայերի ինքնասիրութիւնը պիտի աւելի քան չարժէ ։ Արդեօ՞ք մեր կոմիտէտները այդ առիթով չպիտի մի որոշ վճիռ կայացնեն. չպիտի ծրագրուի, թէ ի՞նչպիսի դիրք պէտք է բռնել ներկայ պայմաններում ։

Ժանիֆ

ՆԱՄԱԿ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

ԿՂԻ, 1904 Յունվ.

Կղիի գաւառը, ինչպէս յայտնի է հայ պատմութիւններուն մէջ Խորձեան գաւառ անունով, կը գտնուի Տերսիմի սահմանին կից Կարնոյ և Երզնկայի մէջտեղը, որուն հայ բնակիչները գրեթէ մշտապէս կը հալածուին մօտակայ թիւրք ու քիւրտ պէկերէն, որոնք յաճախ կը կողոպտեն անոնց ստացուածքը, կայքն ու կարասիները և մինչև անգամ կը զրկեն մարդիկը իրենց կեանքէն։

Դեռ մօտերս տեղի ունեցաւ հետևեալ անցքը, որ կը ներկայացնենք ընթերցողներուն ։

Հանգստան գիւղը, որ քաղաքէն 12 մղոն հեռաւորութիւն ունի, յանկարծ կը պաշարուի մի խումբ քիւրտ աւազակներէ, որոնց գլխաւորն է Խարասեյրենս գիւղի անուանի աւազակապետ Հասան տղայի տղան, որ տանիքներուն վրայ կանգնելով իր օգնականները կը ղրկէ քահանան կանչելու ։ Ալեւոր քահանան, որ գրեթէ 60-ը անցուցած է, իսկոյն կը ներկայանայ անոր և մինչև գետին ծռելով կը բարևէ, որուն փոխադարձաբար կը պատասխանէ աւազակապետը ըսելով. «Ավվարա խէյր պիյ» ։

Յետոյ, աւազակապետը՝ չըմտածելով որ ինքը մշտական հիւր եղած է նոյն քահանային տունը ու կերած է անոր հացը, կըսկսի առաջարկութիւններ ընել ըսելով. «իմ ձին մօտ օրերս սատկեցաւ և անոր նմանը մի ուրիշ գնելու համար քանի ոսկիի պէտք ունիմ, որը շատ դիւրութեամբ ձեռք կը բերէի, եթէ ձմեռ և ճանապարհները գոց չըլլային ։ Արդ, որովհետև այս կողմերու գիւղերը աչքի ընկնող մէկը չի կայ որ անոր դիմեմ, հետևաբար ամենայարմարը ձեզ գտայ որ քանի ոսկիի փոխառութիւն մը ընէք մէկ տարուան համար»։

Խեղճ քահանան, որ քսան ոսկիին երեսը տեսած չէր, խոնարհաբար կը պատասխանէ. «ես ստակ չունիմ, եթէ դուք կարող էք տեղէ մը գտնել, ես երաշխաւոր կըլլամ և մինչև անգամ իմ կալուածներս աւանդ կը դնեմ»։

Վայրագ և անխիղճ քիւրտ աւազակը չնայելով ծերուկ քահանային տուած խոնարհ պատասխանին կըսկսի բռնաբարել զայն, որ տեսնող գիւղի ժողովուրդը իմանալով կըսկսի փախչիլ դէպի անտառները։ Իսկ սոյն ծերուկը կը չարչարեն ու կը բռնանան որ կրօնափոխ ըլլայ ։ Բայց այն կը պատասխանէ թէ՝ իր ծերութեանը մէջ մեծ նախատինք է իրեն կրօնափոխութիւնը ։

Զայրացած քիւրտը անմիջապէս կը հրամայէ որ վերցնեն անոր վրայէն շորերը և կտոր կտոր ընեն զայն ։ Դեռ աւազակապետի հրամանը չէր կատարուած, երբ յանկարծ աւազակախմբի մարդոցմէն մին քրդերէն կըսէ քահանային. «ես քանիցս քու հացդ կերած եմ, ուրանալ չեմ կարող, հետևաբար չեմ թողուր որ աւելի չարչարեն քեզ» ։ Այս ըսելով իր հրացանի գնդակը ուղղակի ծերունւոյն սրտին կը մխէ ։ Քահանան նոյն վայրկեանին կը գտնէ իր մահը, իսկ քիւրտերը կէս ժամէն դուրս կուգան գիւղէն ։

Գիւղի կանայք վերցունելով անոր դիակը, մի փոքր գերեզման կը փորեն, ուր և կամփոփեն ծերունիին մարմինը։ Երեք օրէն յետոյ քաղաքի առաջնորդի հրամանով Բարսեղ քահանայ Տ. Օհանեանը մի խումբ հայ զինեալ երիտասարդներու պաշտպանութեամբ նոյն գիւղը կուգայ պէտք եղած կարգը կատարելու նահատակեալին գերեզմանին վրայ ։

Այնուհետև առաջնորդ Տ. Արիստակէս ծ. վ. Խաչատուրեանը և վիճակի գաւառապետի օգնական Խաչատուր էֆ. Ախթռաւկալեանը դիմեցին գաւառապետին յատուկ բողոքագրով, բայց ոչինչ օգուտ չունեցաւ. ընդհակառակը կառավարութիւնը ըսպառնացաւ անոնց ալ ըսելով. «եթէ դուք այն քահանան շատ կը սիրէիք, դիւրին է ձեզ ալ անոր քով ղրկելը» ։

Վերջիններս շուարած կանգնեցան։ Առաջնորդը շատ չանցած հրաժարականը տալով Պոլիս փոխադրուեցաւ. իսկ գաւառապետի օգնականը տեսնելով հայ գիւղացիներուն չարչարանքները և անոնց գրեթէ ամէն օր բրած բողոքները, առանց գաւառապետի գիտակցութեան, կը բողոքէ Կարնոյ Կուսակալին, ուսկից մի ապահովիչ պատասխան չըստանալուն վերջին ծայր մտատանջութեան մէջ կիյնայ, որուն հետևանքը կըլլայ կաթուածահարութիւն, որ հազիւ գլուխը Կարին՝ իր տունը կը հասցնէ, ուր անմիջապէս կը մեռնի խեղճը...

Մեր ո՞ր մէկ ցաւը ըսել։ Անտէր անպաշտպան՝ աչքերնիս օտարութեան մէջ գտնուող մեր եղբայրներուն ենք յառած որոնք անշուշտ մեր վրայ կը մտածեն ։

ԵՐԵՒԱՆ, 1904 Յունվ.

Բոլշական յուզմունքից յետոյ զայրացած ժողովուրդը լռեց ։ Դա մի խոռ, բայց վեհ և արդար բարկութեան շանթահարող հայեացք էր, որ ուղղեց իր դարևոր իրաւունքից զրկըւած հայ ժողովուրդը դէպի ռուս բռնակալը ։

Այժմ լուռ է ժողովուրդը և մարտիրոսական համբերութեամբ տանում է կառավարութեան այն բոլոր զզուելի, ստոր նեղութիւնները, որ այդ Սիբերիայի կոշտացած խախալը տալիս է իր արբանեակներին՝ շների ու բարբարոսների ձեռքով ։ Սակայն ամբոխի այդ համբերատարութիւնը չէ ապացուցանում՝ որ նա իսկապէս ընկճուեց, թուլացաւ... Ամենօրեայ խուզարկութիւններ, անդադար բռնաբարութիւններն, ու անմեղների աքսորը, հալածանքը ժողովրդի սրտում հաւաքում է կատաղի բարկութեան մի այնպիսի թոյն, որ մի օր պէտք է պայթէ կամաւոր արջի գլխին..

Այդ զգում է արջը և իր աչքից գոռում, փրփրում։ Հրամաններ, ճնշում, իրաւունքների բռնաբարում, հալածանք, հայ պաշտօնեաների վռնդումն, աքսոր ևայլն, ահա զէնքեր, միջոցներ, որոնցմով ուզում է սարսափ ազդել նա մի բուռն հայերին...

Գոռում է և Գոլիցինը. հայ անունն անգամ նա չի կամենում լսել ։ Այդ ամի գունտ միրզա Հոգեառ հրեշտակ է դարձած իր համար, նա ծրագրել է հայերին Սիբիր քշելու դաւաճան միտքը, Կովկասը առանց հայի թողնելու երազելի րոպէն ։ Սակայն աչքից գոռում է նա, չի կարողանում գիշերը քնել և ոտքը տանից դուրս դնել...

Արջը աչքից դողում է... Նա Կարսը դատարկեց համարեայ թէ բանիմաց դասակարգից ամենքին աքսոր քշելով ։ Այսօր էլ նա զօրքով շրջապատած Ալէքսանդրապոլը, մի առ մի պտրում է, խուզարկում անխտիր բոլոր տըներն ու խանութները՝ գտնելու համար այն 400 արկղ փամփուշտները, որոնք իր գինեմոլ օֆիցերները վաճառել են թիւրք աւազակների վրայ բաւական փափուկ գումարով։ Չնայած որ արդէն պաշտօնական քննութեամբ ապացուցել է այդ բանը, բայց անպատճառ (քանի հայերը ըմբոստ են) պէտք է մուրը նրանցից հանել ։ Ասում են որ խօսք կայ քաղաքի մէջ էկզեկուցիա նշանակել, մի պատժական միջոց, որ ամօթաբեր է, ստորացուցիչ է ամբողջ Եւրոպայի առաջ։ Մի քրիստոնեայ կառավարութիւն է որ զօրքը բաժանել է ուզում ժողովրդի մէջ՝ նախ ոչնչացնելու նրա ապրուստի միջոցը, կորելու թշուառ հայը, և ապա, անպատուելու նրանց ընտանեկան սրբութիւնը ։ Եւ այդ օրէնքը դեռ ևս պաշտպանելով մի կառավարութիւն՝ մտածում է գոյութիւն ունենալ քաղաքակրթութեան այս դարերում ։

Արարատեան երկիրը, թըշուառ Մասիսը տեսնում է իր հարազատների այս կրակը, տանջանքը ։ Ի՞նչ պիտի անէ հայը ներկայ կրիտիկական րոպէներին... Անշուշտ պիտի կատարէ նա իր սրբազան պարտականութիւնը՝ հանդէպ բռնակալ կառավարութեան տապալման գործին, եթէ չի ուզում դաւաճանել իր նախնական զգացմունքներին...

Խ. Նարինեան

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ
Печат. Б. Б. Малджиевъ. — Русе.